ՄԱԿ-Ի ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐՆ ԱԴՐԲԵՋԱՆԻՆ ԿՈՉ ԵՆ ԱՐԵԼ ԱՆՀԱՊԱՂ ԱՊԱՇՐՋԱՓԱԿԵԼ ԼԱՉԻՆԻ ՄԻՋԱՆՑՔԸ

15.08.2023 12:09

ՄԱԿ-ի փորձագետները կոչ են անում Ադրբեջանին վերացնել Լաչինի միջանցքի շրջափակումը և դադարեցնել հումանիտար ճգնաժամը Լեռնային Ղարաբաղում:

ԺՆԵՎ (7 օգոստոսի, 2023 թ.) – ՄԱԿ-ի փորձագետների խումբն այսօր տագնապ է հայտնել Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի շարունակվող շրջափակման կապակցությամբ, որը հանգեցրել է Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանում հումանիտար սարսափելի ճգնաժամի:

Վերջին յոթ ամիսների ընթացքում Լեռնային Ղարաբաղը Հայաստանին կապող միակ ճանապարհը խոչընդոտող շրջափակումը բնակչությանը կանգնեցրել է սննդամթերքի, դեղորայքի և հիգիենայի միջոցների սուր պակասի առաջ, ազդել բժշկական և կրթական հաստատությունների գործունեության վրա և վտանգել մարդկանց կյանքը: Բնակիչները, հատկապես երեխաները, հաշմանդամություն ունեցող անձինք, տարեցները, հղի կանայք և հիվանդները, զգալի վտանգի տակ են:

«Լաչինի միջանցքի շրջափակումը հումանիտար արտակարգ իրավիճակ է, որը առաջացրել է հիմնական սննդամթերքի խիստ պակաս, ներառյալ արևածաղկի ձեթը, ձուկը, հավի միսը, կաթնամթերքը, հացահատիկը, շաքարավազը և մանկական կաթնախառնուրդը», - ասում են փորձագետները:

Նրանք նախազգուշացրել են, որ տարածաշրջանը արագորեն սպառում է իր բժշկական պաշարները և հիվանդանոցները դժվարանում են օգնություն ցուցաբերել, քանի որ շտապ օգնության մեքենաների աշխատանքը դժվարացել է վառելիքի մատակարարումների նվազման պատճառով:

Փորձագետները Ադրբեջանի իշխանություններին կոչ են արել անհապաղ վերականգնել Լաչինի միջանցքով երկու ուղղություններով շարժվող մարդկանց, տրանսպորտային միջոցների և բեռների ազատ և անվտանգ տեղաշարժը՝ 2020 թվականի նոյեմբերի հրադադարի համաձայնագրի համապատասխան:

Նրանք նաև կոչ են արել տարածաշրջանում տեղակայված ռուսական խաղաղապահ ուժերին պաշտպանել միջանցքը՝ հրադադարի համաձայնագրի պայմաններով:

«Վերացնելով շրջափակումը, իշխանությունները կարող են մեղմել հազարավոր մարդկանց տառապանքը Լեռնային Ղարաբաղում և թույլ տալ, որպեսզի խաղաղ բնակչությունը անարգել ստանա մարդասիրական օգնություն», - ասում են փորձագետները: «Այս կրիտիկական ժամանակաշրջանում կարևոր է ապահովել բոլոր անհատների անվտանգությունը, արժանապատվությունը և բարեկեցությունը»:

«Մենք կոչ ենք անում Ադրբեջանի կառավարությանը պահպանել իր միջազգային պարտավորությունները՝ հարգելու և պաշտպանելու մարդու իրավունքները, ներառյալ սննդի, առողջության, կրթության և կյանքի իրավունքը: Մենք նաև ընդգծում ենք համագործակցության և երկխոսության կարևորությունը բոլոր ներգրավված կողմերի միջև՝ գտնելու Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման համար խաղաղ և կայուն բանաձև»,- նշել են փորձագետները:

Ներկայացնում ենք ՄԱԿ-ի փորձագետների հայտարարության պաշտոնական տարբերակը անգլերեն լեզվով

Հիշեցնենք, որ 27.07.2023 թվականին Հայաստանի և Արցախի Հանրապետությունների Փաստաբանների պալատների խորհուրդները հանդես էին եկել համատեղ հայտարարությամբ, որում, ի թիվս այլ կառույցների, նաև ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակին **կոչ էին անում** ***ցուցաբերել գործուն աջակցություն Արցախի ժողովրդի շրջափակումը վերացնելու և հումանիտար աղետը կանխելու հարցում, այդ թվում՝ դատապարտելով Ադրբեջանի իշխանությունների ցեղասպան քաղաքականությունը:***

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })